ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 1-ի N 1176-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր)
Դրամաշնորհի N	2
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (այսուհետև՝ Նախարարություն)
Դրամաշնորհառու կազմակերպություն	«ԱՐՄԱԿՍ» ՍՊԸ (այսուհետև՝ Ընկերություն)
Ծրագրի իրականացման ժամանակահատված	2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը
Հաշվետու ժամանակահատված	2026 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը
Ներկայացման օր	2026 թվականի ապրիլի 14
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Գոռ Գրիգորյան, տնօրեն

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք նկարագրել Ծրագրի շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրով տրամադրվող աջակցությունից օգտվելու նպատակով յուրաքանչյուր ամիս էլեկտրոնային և թղթային տարբերակով Ընկերությունը Նախարարություն է ներկայացնում Ծրագրի N 1 ձևին համապատասխան դիմում, որին կցվում է՝

- Ծրագրի N 2 ձևին համապատասխան տեղեկանքը, որը կազմվում է խոշոր եղջերավոր կենդանիների գնման համար ստացված հարկային հաշիվների, հաշիվ վավերագրերի և ֆիզիկական անձանցից ձեռք բերվող ապրանքների մասով օրենսդրությամբ սահմանված կարգով կազմվող հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերի հիման վրա,
- Ծրագրի N 3 ձևին համապատասխան տեղեկանքը, որը կազմվում է դիմումի ներկայացման ամսին նախորդող ամսվա ընթացքում խոշոր եղջերավոր կենդանիների սպանդից ստացված մսեղիքի իրացման հարկային հաշիվների հիման վրա,
- տնտեսավարողի հիմնադիր կամ ավելի քան 10 տոկոս բաժնետոմս ունեցող բաժնետեր հանդիսացող անձանց անվանումները և նրանց ընտանիքի անդամների (ծնող, ամուսին, զավակ) անունների և ազգանունների մասին տեղեկատվությունը,
- խոշոր եղջերավոր կենդանիների տեղափոխման N 1 ձևի և խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի արդյունքում «Սպանդանոցների կառավարում» միասնական էլեկտրոնային հարթակից գեներացված N 5 ձևի անասնաբուժական վկայականների պատճենները:

2.2 Խնդրում ենք նկարագրել Ծրագրի առաջընթացն նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել Ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Ծրագրով տրամադրվող աջակցության շնորհիվ ավելացել է Ընկերության շրջանառությունը: ԱԱՀ-ի 75% վերադարձը թույլ է տալիս ավելի մատչելի գնային քաղաքականություն վարել և ներգրավել նոր գործընկերներ:

Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում Ընկերությունը ստացել է 4,965,862.5 դրամի չափով աջակցություն՝ 2025 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացված սպանդի համար վճարված ԱԱՀ-ի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել է նաև հունվար ամսվա համար աջակցության ստացման 442,612.5 դրամի չափով դիմում, որի դիմաց վճարումը 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ չի կատարվել:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական

առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

չկա

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրից օգտվելու հետ կապված խոչընդոտներ գրեթե չեն առաջացել՝ Նախարարության աշխատակիցներն ուշադիր են, բարյացկամ վերաբերմունք ունեն տնտեսավարողների հանդեպ, տիրապետում են իրենց աշխատանքին և Ծրագրի մանրամասներին:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

Հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները՝ Խոշոր եղջերավոր կենդանիների սպանդն իրականացնել օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և Ծրագրից օգտվելու նպատակով դիմումները և փաստաթղթերը ներկայացնել սահմանված ընթացակարգին համապատասխան:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Չկա

Հաշվետվության պատասխանատուի Գոռ Գրիգորյան, տնօրեն

(ստորագրություն)

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 1-ի N 1176-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության (այսուհետ՝ Ծրագիր)
Դրամաշնորհի N	2
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (այսուհետև՝ Նախարարություն)
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Մսամթերքի նոր աշխարհ 1» ՍՊԸ (այսուհետև՝ Ընկերություն)
Ծրագրի իրականացման ժամանակահատված	2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը
Հաշվետու ժամանակահատված	2026 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը
Ներկայացման օր	2026 թվականի ապրիլի 6
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Անի Սուքիասյան, հաշվապահ

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք նկարագրել Ծրագրի շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

* Խոշոր եղջերավոր կենդանին (ԽԵԿ) գնելուց ստուգվում է նույնականացման անհատական համարը, արդյոք կենդանին պատկանում է տվյալ անասնատիրոջը, * սպանդն իրականացնելուց նույնականացվում է սպանդի ենթարկվող ԽԵԿ-ը, * տվյալ նույնականացման անհատական համարով ԽԵԿ-ի համար դուրս է գրվում անասնաբուժական N 5 ձևը, * մսեղիքն իրացվում է այն կազմակերպությանը, որն ուներ պատվեր և դուրս է գրվում հարկային հաշիվ, * անասնաբուժական N 5 ձևը, հարկային հաշիվը, անասնաբուժական N 1 ձևը և նույնականացման անհատական համարի վերաբերյալ տվյալները ներկայացվում են Նախարարություն

2.2 Խնդրում ենք նկարագրել Ծրագրի առաջընթացն նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել Ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Առաջընթացը միանշանակ շատ մեծ է, Ծրագիրն Ընկերությանը թույլ տվեց իրականացնել ավելի մեծ ծավալներով ԽԵԿ-ի սպանդ և ավելի ընդլայնել գործունեությունը, քանի որ վճարված ԱԱՀ-ի 75 տոկոս վերադարձը հնարավորություն է տալիս ավելի մատչելի գնառաջարկով ներկայանալ շուկայում՝ ավելացնելով շրջանառությունը: Հակառակ դեպքում շահույթը քիչ է լինում և ընկերությանը շահավետ չէ տվյալ գործունեությունը ծավալելը: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում Ընկերությունը ստացել է 16,213,229.0 դրամի չափով աջակցություն՝ 2025 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում իրականացված սպանդի համար վճարված ԱԱՀ-ի դիմաց: Հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել է նաև դեկտեմբեր, հունվար և փետրվար ամիսների համար 18,133,199.0 դրամի չափով աջակցության ստացման դիմումներ, որոնց դիմաց վճարումը 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ չի կատարվել:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

չկա

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Ծրագրի շրջանակներում փորձ ձեռք բերվեց Նախարարության հետ առնչվող աշխատանքներն ավելի լավ կազմակերպելու, ավելի պատշաճ ձևով իրականացնելու գործունեությունը:
Հաշվետու ժամանակահատվածում խոչընդոտներ գրեթե չեն առաջացել, քանի որ Նախարարության տվյալ ստորաբաժանման աշխատակիցները տիրապետում են Ծրագրի բոլոր մանրամասներին և պատրաստակամ են աջակցելու, որպեսզի ներկայացված դիմումները և փաթեթները համապատասխանեցվեն Ծրագրով սահմանված պահանջներին:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

Գործողությունները կատարվելու են սույն հաշվետվության 2.1-ին կետում նշված կարգով:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

չկա

Հաշվետվության պատասխանատուի Անի Սուքիասյան հաշվապահ

.....
(ստորագրություն)